

Փոստային վճարումների ծառայությունների մասին համաձայնագիր

Բովանդակություն

ՄԱՍ I

Փոստային վճարումների ծառայությունների նկատմամբ կիրառվող
ընդհանուր սկզբունքները

Գլուխ I

Ընդհանուր դրույթներ

- Համաձայնագրի գործողության շրջանակը
- Սահմանումները
- Սույն համաձայնագրին միանալուց բխող պարտավորությունների կատարման համար պատասխանատու սուբյեկտի կամ սուբյեկտների նշանակումը
- Անդամ երկրների գործառույթները
- Փոստային վճարումների ծառայությունների ոլորտի դերակատարների առավել ընդլայնված ցանկի կողմից այդ ծառայությունների բացառիկ մատուցումը
- Գործառնական գործառույթները
- Փոստային վճարումների ծառայությունների դրամական միջոցների նկատմամբ սեփականության իրավունքը
- Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման եւ ֆինանսական հանցագործությունների կանխարգելումը
- Անձնական տվյալների խորհրդապահությունը եւ օգտագործումը
- Տեխնոլոգիական չեզոքությունը

Գլուխ II

Ընդհանուր սկզբունքները եւ ծառայության որակը

- Ընդհանուր սկզբունքները
- Ծառայության որակը

Գլուխ III

Տվյալների էլեկտրոնային փոխանակման սկզբունքները

- Փոխգործելիությունը
- Էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանակման անվտանգության ապահովումը
- Հետեւման եւ հետագծման համակարգը

Մաս II

Փոստային վճարումների ծառայությունները կարգավորող կանոնները

Գլուխ I

Փոստային վճարման հանձնարարություններին ընթացք տալը

16. Փոստային վճարման հանձնարարություններ ընդունելը, դրանց մուտքագրումը եւ փոխանցումը
17. Ինքնության ստուգումը եւ դրամական միջոցների վճարումը
18. Առավելագույն գումարը
19. Փոխհատուցումը

Գլուխ II

Բողոքները եւ պատասխանատվությունը

20. Բողոքները
21. Նշանակված օպերատորների պատասխանատվությունն օգտվողների առջեւ
22. Նշանակված օպերատորների՝ միմյանց նկատմամբ ունեցած պարտավորություններն ու պատասխանատվությունը
23. Նշանակված օպերատորներին պատասխանատվությունից ազատելը
24. Պատասխանատվության մասով վերապահումները

Գլուխ III

Ֆինանսական հարաբերությունները

25. Հաշվապահական հաշվառման եւ ֆինանսական կանոնները
26. Վերջնահաշվարկը եւ քլիրինգը

Մաս III

Եզրափակիչ դրույթներ

27. Վերապահումները Համագումարում
28. Եզրափակիչ դրույթներ
29. Փոստային վճարումների ծառայությունների մասին համաձայնագրի ուժի մեջ մտնելը եւ գործողության ժամկետը

Փոստային վճարումների ծառայությունների մասին համաձայնագիր

Համաշխարհային փոստային միության (այսուհետեւ՝ Միություն) անդամ երկրների կառավարությունների ներքոստորագրյալ լիազոր ներկայացուցիչները, հիմնվելով 1964 թվականի հուլիսի 10-ին Վիեննայում ընդունված՝ Համաշխարհային փոստային միության կանոնադրության 21.4 հոդվածի վրա՝ ընդհանուր համաձայնությամբ, եւ հաշվի առնելով Կանոնադրության 24.3 եւ 5-րդ հոդվածները, Կանոնադրության սկզբունքներին համահունչ կազմեցին հետեւյալ համաձայնագիրը՝ մասնավորապես նշանակված օպերատորների ցանցերի փոխգործելիության հնարավորություն ընձեռող համակարգերի հիման վրա ֆինանսական ծառայությունների լայն մատչելիության ապահովման եւ առավելագույն թվով օգտվողների համար հարմարեցված ապահով եւ մատչելի փոստային վճարումների ծառայություններ մատուցելու նպատակով:

ՄԱՍ I

Փոստային վճարումների ծառայությունների նկատմամբ կիրառվող ընդհանուր սկզբունքները

Գլուխ I

Ընդհանուր դրույթներ

Հոդված 1

Համաձայնագրի գործողության շրջանակը

1. 2-րդ կետի դրույթներին համապատասխան՝ յուրաքանչյուր անդամ երկիր առավելագույն ջանքերի գործադրմամբ ապահովում է իր տարածքում էլեկտրոնային միջոցներով հետեւյալ փոստային վճարումների ծառայությունների առաջարկումը կամ ընդունումը.

1.1. Կանխիկ դրամական փոխանցում ստացողին. ուղարկողը դրամական միջոցները հանձնում է ծառայության մուտքի կետ եւ խնդրում է, որ ամբողջ գումարը կանխիկ վճարվի ստացողին՝ առանց պահումների:

1.2. Փոխանցում ուղարկողի հաշվից՝ ստացողին կանխիկ վճարելու համար. ուղարկողն իր հաշվից գումար ելքագրելու հրահանգ է տալիս եւ խնդրում է, որ ամբողջ գումարը կանխիկ վճարվի ստացողին՝ առանց պահումների:

1.3. Կանխիկ դրամական փոխանցում ստացողի հաշվին. ուղարկողը կանխիկ դրամական միջոցները հանձնում է ծառայության մուտքի կետ եւ խնդրում է, որ դրանք փոխանցվեն ստացողի հաշվին՝ առանց պահումների:

1.4. Փոխանցում ուղարկողի հաշվից ստացողի հաշվին. ուղարկողն իր հաշվից գումար ելքագրելու հրահանգ է տալիս եւ խնդրում է, որ ստացողի հաշվին

մուտքագրվի համարժեք գումարը՝ առանց պահումների:

2. Այն դեպքում, երբ 1-ին կետում նշված էլեկտրոնային փոստային վճարումների ծառայություններից որեւէ մեկը չի առաջարկվում կամ ընդունվում անդամ երկրի կողմից, այդ անդամ երկիրը պետք է առաջարկի կամ ընդունի վերոնշյալ փոստային վճարումների ծառայություններից առնվազն մեկը՝ թղթային եղանակով:

3. Կանոնակարգերով սահմանվում են սույն համաձայնագրի կատարման ընթացակարգերը:

Հոդված 2

Սահմանումները

1. Իրավասու մարմին՝ անդամ երկրի ցանկացած ազգային մարմին, որն օրենքով կամ կանոնակարգերով իրեն վերապահված լիազորությունների ուժով վերահսկում է նշանակված օպերատորի կամ սույն հոդվածում նշված անձի գործունեությունը: Իրավասու մարմինը կարող է կապվել փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարում ներգրավված վարչական կամ իրավական մարմինների եւ մասնավորապես՝ ֆինանսական հետախուզական ազգային ստորաբաժանումների եւ վերահսկողություն իրականացնող պետական մարմինների հետ:

2. Մասնավճար՝ պատվիրող նշանակված օպերատորի կողմից վճարող նշանակված օպերատորին վճարվող մասնակի կանխավճար՝ վճարող նշանակված օպերատորի՝ փոստային վճարումների ծառայությունների կանխիկ դրամական միջոցների հետ կապված վիճակը մեղմելու համար:

3. Փողերի լվացում՝ ֆինանսական միջոցների փոխարկում կամ փոխանցում՝ իմանալով, որ այդ միջոցները ստացվել են հանցավոր գործունեության կամ այդպիսի գործունեության մեջ մասնակցության արդյունքում՝ նպատակ ունենալով թաքցնել կամ քողարկել այդ միջոցների ապօրինի ծագումը կամ օգնել այդպիսի գործունեության մեջ ներգրավված անձանց խուսափել իրենց գործողության իրավական հետեւանքներից. փողերի լվացում է համարվում, երբ լվացման ենթակա միջոցների ստացման գործունեության համար նախատեսվում է քրեական պատասխանատվություն մեկ այլ անդամ երկրում կամ երրորդ երկրում:

4. Ակտիվների առանձնացում՝ նշանակված օպերատորի ֆինանսական միջոցներից օգտատիրոջ միջոցների պարտադիր առանձնացում, որով կանխվում է օգտատիրոջ միջոցների՝ փոստային վճարումների ծառայության գործառնությունների կատարումից բացի այլ նպատակներով օգտագործումը:

5. Քլիրինգային կենտրոն՝ բազմակողմ փոխանակումների շրջանակներում քլիրինգային կենտրոնը զբաղվում է մեկ օպերատորի կողմից մյուսին մատուցվող ծառայություններից բխող փոխադարձ պարտավորությունների եւ պահանջների կատարմամբ: Դրա դերն է օպերատորների միջեւ հաշիվների փոխանակումների հաշվառումը, որոնք կարգավորվում են հաշվարկային բանկի միջոցով, եւ անհրաժեշտ քայլերի ձեռնարկումը՝ փոխադարձ հաշվարկների ժամանակ տեղի ունեցած անհամապատասխանությունների դեպքում:

6. Քլիրինգ՝ համակարգ, որը հնարավորություն է ընձեռում վճարումների քանակը հասցնել նվազագույնի՝ ներգրավված կողմերի համար պարբերական դեբետային եւ կրեդիտային հաշվեկշիռ կազմելու միջոցով: Քլիրինգը ներառում է երկու փուլ՝ երկկողմանի հաշվեկշիռների որոշում եւ այդ հաշվեկշիռները գումարելու միջոցով ամբողջ համայնքի համեմատ յուրաքանչյուր սուբյեկտի ընդհանուր դիրքի հաշվարկում՝ տվյալ սուբյեկտի պարտապանի կամ պարտատիրոջ դիրքի հիման վրա միայն մեկ փոխադարձ հաշվարկ կատարելու նպատակով:

7. Կենտրոնացված հաշիվ՝ մեկ հաշվում միավորված, տարբեր աղբյուրներից ստացված միջոցների ամբողջություն:

8. Փոխադարձ հաշիվ՝ նշանակված օպերատորների կողմից որպես երկկողմ հարաբերությունների մաս փոխադարձ համաձայնությամբ բացված ընթացիկ փոստային հաշիվ, որի օգնությամբ մարվում են փոխադարձ պարտավորությունները եւ պարտքերը:

9. Հանցավոր գործունեություն՝ ներպետական օրենսդրությամբ սահմանված՝ հանցագործությանը կամ զանցանքին ցանկացած բնույթի մասնակցություն կամ դրանց կատարում:

10. Երաշխիքային ավանդ՝ կանխիկ կամ արժեթղթերի ձեռով ավանդադրված գումար՝ նշանակված օպերատորների միջեւ վճարումները երաշխավորելու համար:

11. Ստացող՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն ուղարկողի կողմից նշվել է որպես դրամական հանձնարարության կամ ընթացիկ փոստային փոխանցման շահառու:

12. Երրորդ արժույթ՝ միջանկյալ արժույթ, որն օգտագործվում է երկու արժույթների փոխարկելիության անհնարինության դեպքում կամ հաշիվների քլիրինգի/փոխադարձ հաշվարկների համար:

13. Օգտվողների վերաբերյալ տվյալների հավուր պատշաճի ուսումնասիրություն՝ նշանակված օպերատորին վերապահված ընդհանուր պարտավորություն, որը ներառում է հետեւյալ պարտականությունները՝

13.1. օգտվողների նույնականացում,

13.2. փոստային վճարման հանձնարարության նպատակների վերաբերյալ տեղեկատվության ստացում,

13.3. փոստային վճարման հանձնարարությունների դիտանցում,

13.4. օգտվողների վերաբերյալ տեղեկությունների արդիականության ստուգում,

13.5. կասկածելի գործարքների վերաբերյալ հաղորդում իրավասու մարմիններին:

14. Փոստային վճարման հանձնարարություններին առնչվող էլեկտրոնային տվյալներ՝ էլեկտրոնային միջոցներով մեկ նշանակված օպերատորից մյուսին փոխանցվող տվյալներ, որոնք վերաբերում են փոստային վճարման հանձնարարությունների կատարմանը, բողոքներին, հասցեների փոփոխություններին կամ ուղղմանը, փոխհատուցմանը. այս տվյալները կա՛մ կարող են մուտքագրված լինել նշանակված օպերատորների կողմից, կա՛մ ինքնաշխատ կերպով գեներացվել օպերատորների տեղեկատվական համակարգից եւ ցույց տալ փոստային վճարման հանձնարարության կամ հայտի կարգավիճակի

փոփոխությունը:

15. Անձնական տվյալներ՝ ուղարկողին կամ ստացողին նույնականացնելու համար անհրաժեշտ անձնական տեղեկություններ:

16. Փոստային տվյալներ՝ փոստային վճարման հանձնարարության ուղարկման եւ հետեւման կամ ռազմավարական նպատակներով, ինչպես նաեւ կենտրոնացված քլիրինգային համակարգի համար անհրաժեշտ տվյալներ:

17. Տվյալների էլեկտրոնային փոխանակում (EDI)՝ գործառնությունների վերաբերյալ համակարգչից համակարգիչ տվյալների փոխանակում Միության համակարգի հետ համատեղելի ցանցերի եւ ստանդարտ ձեւաչափերի միջոցով:

18. Ուղարկող՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը նշանակված օպերատորին հանձնարարում է մատուցել փոստային վճարումների ծառայություն՝ Միության ակտերին համապատասխան:

19. Ահաբեկչության ֆինանսավորում՝ ներառում է ահաբեկչական գործողությունների, ահաբեկիչների եւ ահաբեկչական կազմակերպությունների ֆինանսավորումը:

20. Օգտվողների միջոցներ՝ ուղարկողի կողմից պատվիրող նշանակված օպերատորին տրամադրված միջոցներ՝ կանխիկ եղանակով կամ նշանակված օպերատորի գրանցամատյաններում գրանցված՝ ուղարկողի հաշվից ելքագրման միջոցով կամ ուղարկողի կողմից ուղարկող նշանակված օպերատորի կամ ցանկացած այլ ֆինանսական օպերատորի տնօրինությանը հանձնված էլեկտրոնային բանկային ցանկացած այլ ապահով մեթոդով, որոնք պետք է վճարվեն ուղարկողի կողմից նշված ստացողին՝ սույն համաձայնագրին եւ դրա կանոնակարգերին համապատասխան:

21. ՎՎ (վերադիր վճարով) դրամական հանձնարարություն՝ գործառնական եզրույթ, որն օգտագործվում է նշելու համար այն փոստային վճարման հանձնարարությունը, որը տրվել է սույն համաձայնագրի 1-ին հոդվածով սահմանված կարգով վերադիր վճարով առաքանու առաքման դիմաց:

22. Հանձնարարության տրման արժույթ՝ ստացման երկրի արժույթ կամ այն ստացման երկրի կողմից թույլատրված երրորդ արժույթ, որտեղ տրվել է փոստային վճարման հանձնարարությունը:

23. Պատվիրող նշանակված օպերատոր՝ նշանակված օպերատոր, որը փոստային վճարման հանձնարարությունը փոխանցում է վճարող նշանակված օպերատորին՝ Միության ակտերին համապատասխան:

24. Վճարող նշանակված օպերատոր՝ նշանակված օպերատոր, որը պատասխանատվություն է կրում ստացող երկրում փոստային վճարման հանձնարարության կատարման համար՝ Միության ակտերին համապատասխան:

25. Վավերականության ժամկետ՝ ժամանակահատված, որի ընթացքում փոստային վճարման հանձնարարությունը կարող է կատարվել կամ չեղարկվել:

26. Ծառայության մուտքի կետ՝ ֆիզիկական կամ վիրտուալ տարածք, որտեղ օգտվողը կարող է տալ կամ ստանալ փոստային վճարման հանձնարարություն:

27. Վարձատրություն՝ պատվիրող նշանակված օպերատորի կողմից վճարող նշանակված օպերատորին տրամադրվող գումար՝ ստացողի վճարման համար/դիմաց:

28. Հետկանչելիություն՝ ուղարկողի՝ մինչև վճարման պահը կամ վճարումը կատարված չլինելու դեպքում՝ վավերականության ժամկետի ավարտը փոստային վճարման հանձնարարության (դրամական փոստային հանձնարարության կամ փոխանցման) հետկանչի հնարավորությունը:

29. Կոնտրագենտի ռիսկ՝ այն ռիսկը, որ պայմանագրի կողմերից որեւէ մեկը չի կատարի իր պարտավորությունները, ինչը կհանգեցնի կորստի կամ իրացվելիության ռիսկի:

30. Իրացվելիության ռիսկ՝ ռիսկ, որ վճարահաշվարկային համակարգի մասնակիցը կամ կոնտրագենտը ժամանակավորապես անկարող կլինի պահանջվող ժամկետում ամբողջությամբ կատարել իր պարտավորությունը:

31. Կասկածելի գործարքի մասին հաղորդում՝ նշանակված օպերատորի պարտավորությունը՝ իր երկրի իրավասու ազգային մարմիններին կասկածելի գործարքների մասին ներպետական օրենսդրության եւ Միության որոշումների հիման վրա տեղեկատվություն տրամադրելու մասով:

32. Հետեւման եւ հետագծման համակարգ՝ համակարգ, որը հնարավորություն է տալիս հետեւել փոստային վճարման պատվերի կատարման ընթացքին եւ ցանկացած պահի տեսնել դրա գտնվելու վայրը եւ կարգավիճակը:

33. Գին՝ ուղարկողի կողմից պատվիրող նշանակված օպերատորին փոստային վճարման ծառայության դիմաց վճարվող գումար:

34. Կասկածելի գործարք՝ միանգամյա կամ կրկնվող փոստային վճարման հանձնարարություն կամ փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման իրավախախտմանն առնչվող փոստային վճարման հանձնարարության հետ կապված փոխհատուցման պահանջ:

35. Օգտվող՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ուղարկող կամ ստացող, որը սույն համաձայնագրին համապատասխան օգտվում է փոստային վճարման ծառայություններից:

Հոդված 3

Սույն համաձայնագրին միանալուց բխող պարտավորությունների կատարման համար պատասխանատու սուբյեկտի կամ սուբյեկտների նշանակումը

1. Անդամ երկրները Համագումարի ավարտից հետո վեց ամսվա ընթացքում Միջազգային բյուրոյին հայտնում են այն պետական մարմնի անունը եւ հասցեն, որը պատասխանատու է փոստային վճարման ծառայությունների մատուցման հետ կապված պետական կարգավորում եւ վերահսկողություն իրականացնելու համար:

2. Համագումարի ավարտից հետո վեց ամսվա ընթացքում անդամ երկրները Միջազգային բյուրոյին հայտնում են նաեւ այն օպերատորի (օպերատորների) անունը (անունները) եւ հասցեն (հասցեները), որը (որոնք) պաշտոնապես նշանակվել է (են) իր (իրենց) ցանցի միջոցով առնվազն մեկ փոստային վճարումների ծառայություն առաջարկելու կամ ընդունելու եղանակով փոստային վճարման ծառայությունը գործարկելու եւ իր (իրենց) երկրի տարածքում Միության ակտերից բխող պարտավորությունները կատարելու նպատակով:

3. Սահմանված վեցամսյա ժամկետում այդպիսի ծանուցում չստանալու դեպքում Միջազգային բյուրոն անդամ երկրին ուղարկում է հիշեցում:

4. Համագումարների միջև ընկած ժամանակահատվածում Միջազգային բյուրոյին հնարավորինս շուտ պետք է ծանուցվի պետական մարմինների եւ պաշտոնապես նշանակված օպերատորների փոփոխման մասին:

5. Նշանակված օպերատորները փոստային վճարումների ծառայությունները մատուցում են սույն համաձայնագրին համապատասխան:

Հոդված 4

Անդամ երկրների գործառույթները

1. Անդամ երկրները ձեռնարկում են անհրաժեշտ քայլեր՝ ապահովելու փոստային վճարումների ծառայությունների անխափան մատուցումն իրենց նշանակված օպերատորի (օպերատորների) կողմից իր (իրենց) պարտավորությունը (պարտավորությունները) չկատարելու դեպքում՝ պահպանելով այդ օպերատորի (օպերատորների)՝ այլ նշանակված օպերատորների նկատմամբ Միության ակտերով ստանձնած պատասխանատվությունը:

2. Իր նշանակված օպերատորի (օպերատորների) կողմից պարտավորությունների չկատարման դեպքում անդամ երկիրը Միջազգային բյուրոյի միջոցով տեղեկացնում է սույն համաձայնագրի կողմ հանդիսացող մյուս անդամ երկրներին՝

2.1. իր կողմից մատուցվող փոստային վճարման ծառայությունների կասեցման մասին՝ սկսած նշված ամսաթվից մինչև հաջորդ ծանուցման ամսաթիվը,

2.2. այն միջոցների մասին, որոնք ձեռնարկվել են նոր նշանակված օպերատորի պատասխանատվության ներքո ծառայությունները վերականգնելու ուղղությամբ:

Հոդված 5

Փոստային վճարումների ծառայությունների ոլորտի դերակատարների առավել ընդլայնված ցանկի կողմից այդ ծառայությունների բացառիկ մատուցումը

1. Չսահմանափակելով 6.4 հոդվածում նշված ենթապայմանագրի կնքման հնարավորությունը՝ անդամ երկրները i) իրենց նշանակված օպերատորի (օպերատորների) կողմից 1-ին հոդվածում սահմանված փոստային վճարման ծառայությունների ամբողջ շրջանակի չմատուցման դեպքում կամ ii) 4-րդ հոդվածում նշված իրավիճակին բախվելիս հնարավորություն կունենան թույլատրել նշանակված օպերատորների կողմից առավել ընդլայնված փոստային ոլորտի դերակատարների (այսուհետև՝ ԸՓՈԴ) ներգրավումը փոստային վճարման ծառայությունների համատեղմանը եւ (կամ) գործարկմանը՝ ֆինանսական ծառայությունների լայն մատչելիության ապահովման եւ միջազգային փոստային վճարման ծառայությունների ցանցի փոխգործելիության հետագա խթանման նպատակով:

1.1. Անդամ երկրները պետք է ապահովեն, որ ԸՓՈԴ-ների կողմից կատարվող

փոստային վճարման ծառայությունների կատարման համար տրամադրված իրենց թույլտվությունները ներառեն սույն համաձայնագրի համապատասխան դրույթների եւ ԸՓՈԴ-ների կողմից PosTransfer համատեղ ապրանքային նշանի ներքո գործունեություն ծավալելու համար արտոնագրերի ձեռքբերման մասով Միության ցանկացած համապատասխան պահանջի պահպանման պահանջ:

1.2. ԸՓՈԴ-ների նույնականացումն ըստ անդամ երկրների պետք է իրականացվի 1-ին կետում նշված հարաչափերին համապատասխան (հաշվի առնելով Փոստային գործառնությունների խորհրդի կողմից ստեղծված համապատասխան մարմնի սահմանած մանրամասն աշխատանքային չափորոշիչները):

1.3. Միջազգային բյուրոն պատասխանատու է այն անդամ երկրների ցանկը պատրաստելու համար, որտեղ կարող է թույլատրվել ԸՓՈԴ-ների գործունեությունը, ինչպես նաեւ թույլտվություն ստացած ԸՓՈԴ-ների ցանկը: Միջազգային բյուրոն պետք է այս ցանկը պարբերաբար թարմացնի եւ շրջաբերական գրությամբ ուղարկի բոլոր անդամ երկրներին:

2. 1-ին կետում ներկայացված հնարավորությունն իրագործվում է այն անդամ երկրի ներպետական օրենսդրությանը կամ քաղաքականությանը համապատասխան, որտեղ ստեղծվել է ԸՓՈԴ-ը: Այս առնչությամբ եւ չհակասելով 3-րդ հոդվածում պարունակվող՝ նշանակման մասով պարտավորություններին՝ անդամ երկրները երաշխավորում են Փոստային վճարումների ծառայությունների մասին համաձայնագրի շրջանակներում իրենց ստանձնած պարտավորությունների անխափան կատարումը:

2.1. Վերը նշված չափորոշիչներին համապատասխան՝ ԸՓՈԴ-ների արտոնագրման դիմումները պետք է հասցեագրվեն այն անդամ երկրին, որտեղ ԸՓՈԴ-ը նախատեսում է իրականացնել փոստային վճարման ծառայություններին միանալու կամ դրանք շահագործելու հետ կապված գործունեությունը: Այս առումով ԸՓՈԴ-ը կարող է գործունեություն ծավալել մի քանի անդամ երկրներում՝ պայմանով, որ այն համապատասխանում է չափանիշներին եւ տվյալ անդամ երկրի պետական մարմնի կողմից ստացել է նման թույլտվություն:

2.2. Անդամ երկրի կողմից որեւէ ԸՓՈԴ-ի պաշտոնապես տրված ցանկացած թույլտվություն պետք է ժամանակային սահմանափակում ունենա եւ պարունակի անդամ երկրի կողմից այդ թույլտվությունը չեղյալ ճանաչելու հնարավորություն այն դեպքում, երբ 1-ին պարբերության մեջ նշված պայմաններն այլեւս չեն բավարարվում:

2.3. Վերը նշված 1.3 կետի նպատակներով վերոնշյալ անդամ երկրի՝ ԸՓՈԴ-ին տրված վերոնշյալ թույլտվության պատճենը (եւ դրան առնչվող ցանկացած համապատասխան փաստաթուղթ) պետք է անհապաղ տրամադրվի Միջազգային բյուրոյին:

3. 2-րդ պարբերության մեջ նշված պահանջը կիրառելի է նաեւ ստացման անդամ երկրի կողմից ԸՓՈԴ-ներից փոստային վճարման հանձնարարություններ ընդունելու համար:

4. Անդամ երկրները տեղեկացնում են Միջազգային բյուրոյին ԸՓՈԴ-ների միջոցով փոխանցվող եւ (կամ) ստացվող փոստային վճարման

հանձնարարությունների վերաբերյալ իրենց քաղաքականությունների մասին: Այդ տեղեկատվությունը պետք է հասանելի դարձվի Միության ինտերնետային կայքում:

5. Սույն հոդվածում ոչինչ չպետք է մեկնաբանվի այնպես, որ դրանից հնարավոր լինի ենթադրել, որ ԸՓՈԴ-ները գտնվում են նույն կարգավիճակում, ինչ Միության ակտերի համաձայն համապատասխան անդամ երկրի նշանակված օպերատորները, ոչ էլ պետք է սահմանվի իրավական պարտավորություն այլ անդամ երկրների համար՝ այդ ԸՓՈԴ-ներին ճանաչելու որպես նշանակված օպերատորներ՝ սույն համաձայնագրի նպատակներով:

6. Սույն հոդվածի դրույթներին համապատասխանությունն ապահովելու նպատակով անդամ երկրները պետք է համաձայնեն, որ փոստային վճարման ծառայություններին միանալու եւ (կամ) դրանք շահագործելու համար իրենց կողմից ԸՓՈԴ-ներին տրվող թույլտվությունները տրամադրվեն վերջիններիս այն պայմանով, որ նրանք համաձայնեն, որ սույն համաձայնագրի ներքո իրենց գործունեությունը կարող է Միջազգային բյուրոյի կողմից պարբերական աուդիտների ենթարկվել՝ համաձայն Կանոնակարգերով սահմանված համապատասխան ընթացակարգերի:

Հոդված 6

Գործառնական գործառույթները

1. Անդամ երկրները պետք է ապահովեն, որ 5-րդ հոդվածում նշված՝ իրենց կողմից նշանակված օպերատորները եւ լիազորված ԸՓՈԴ-ները պատասխանատվություն կրեն այլ օպերատորների եւ օգտվողների առջեւ՝ փոստային վճարման ծառայությունների իրականացման համար:

2. Նրանք պետք է ազգային օրենսդրությանը համապատասխան պատասխանատվություն կրեն այնպիսի ռիսկերի համար, ինչպիսիք են գործառնական ռիսկերը, իրացվելիության ռիսկերը եւ կոնտրագենտի ռիսկերը:

3. 1-ին պարբերության մեջ նշված՝ նշանակված օպերատորներին եւ լիազորված ԸՓՈԴ-ներին վստահված փոստային վճարման ծառայությունները կատարելու համար անդամ երկրներն ապահովում են, որ այդ սուբյեկտները կնքեն երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր իրենց կողմից ընտրված այլ նշանակված օպերատորների եւ լիազորված ԸՓՈԴ-ների հետ:

4. Չհակասելով վերոգրյալ պարտավորություններին՝ նշանակված օպերատորը պետք է հնարավորություն ունենա ազգային օրենսդրությանը համապատասխան ենթապայմանագիր կնքել անդամ երկրի կողմից իրեն վստահված փոստային վճարման ծառայությունների մի մասին միանալու եւ շահագործման մասով նշանակված օպերատորի հետ պայմանագրային պարտավորություններով կապված այլ սուբյեկտների հետ: Այս առումով, նշանակված օպերատորը պետք է երաշխավորի իր պարտավորությունների՝ սույն համաձայնագրին համապատասխան անխափան կատարումը եւ ամբողջությամբ պատասխանատվություն կրի այլ անդամ երկրների կողմից նշանակված օպերատորների եւ Միջազգային բյուրոյի հետ իր բոլոր հարաբերությունների համար:

Հոդված 7

Փոստային վճարումների ծառայությունների դրամական միջոցների նկատմամբ սեփականության իրավունքը

1. Յանկացած գումար, որը տրամադրվում է կանխիկ կամ ելքագրվում է հաշվից փոստային վճարման հանձնարարությունը կատարելու համար, պատկանում է ուղարկողին մինչև ստացողին վճարվելը կամ նրա հաշվին մուտքագրվելը՝ բացառությամբ վերադիր վճարով դրամական հանձնարարության դեպքի:

2. Փոստային վճարման հանձնարարության վավերականության ժամկետի ընթացքում ուղարկողը կարող է հետ կանչել փոստային վճարման այդ հանձնարարությունը, քանի դեռ վճարումը ստացողին չի կատարվել, կամ գումարը չի մուտքագրվել նրա հաշվին՝ բացառությամբ վերադիր վճարով դրամական հանձնարարության դեպքի:

3. Վերադիր վճարով դրամական հանձնարարության կատարման համար կանխիկ տրված կամ հաշվից ելքագրված ցանկացած գումար պատկանում է վերադիր վճարով առաքանին առաքող ուղարկողին փոխանցման կատարման պահից: Այդ պահից սկսած՝ վճարման հանձնարարությունն անհետկանչելի է:

Հոդված 8

Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման եւ ֆինանսական հանցագործությունների կանխարգելումը

1. Նշանակված օպերատորները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ քայլերը՝ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման եւ ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարի մասով ազգային եւ միջազգային օրենսդրությունից բխող իրենց պարտավորությունները կատարելու համար:

2. Նրանք պետք է իրենց երկրների իրավասու մարմիններին ազգային օրենքներին ու կանոնակարգերին համապատասխան տեղեկացնեն կասկածելի գործարքների մասին:

3. Կանոնակարգերով սահմանվում են նշանակված օպերատորների մանրամասն պարտավորությունները՝ օգտվողների նույնականացման, նրանց վերաբերյալ տվյալների հավուր պատշաճի ուսումնասիրության եւ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման եւ ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարի վերաբերյալ կանոնակարգերի կիրարկման ընթացակարգերի մասով:

Հոդված 9

Անձնական տվյալների խորհրդապահությունը եւ օգտագործումը

1. Անդամ երկրները եւ նրանց նշանակված օպերատորները, իրենց ներպետական օրենսդրությանը եւ անհրաժեշտության դեպքում՝ միջազգային պարտավորություններին եւ Կանոնակարգերին համապատասխան, ապահովում են անձնական տվյալների խորհրդապահությունը եւ անվտանգությունը:

2. Անձնական տվյալները կարող են օգտագործվել միայն այն նպատակներով, որոնց համար դրանք հավաքվել են՝ գործող ներպետական օրենսդրությանը եւ միջազգային պարտավորություններին համապատասխան:

3. Անձնական տվյալները փոխանցվում են միայն այն երրորդ կողմերին, որոնք գործող ներպետական օրենսդրությանը համապատասխան լիազորված են հասանելիություն ունենալ այդ տվյալներին:

4. Նշանակված օպերատորներն իրենց հաճախորդներին տեղեկացնում են վերջիններիս անձնական տվյալների օգտագործման եւ այդ տվյալների հավաքման նպատակի մասին:

5. Փոստային վճարման հանձնարարությունների կատարման համար պահանջվող տվյալները խորհրդապահական են:

6. Վիճակագրական նպատակներով եւ հավանաբար նաեւ ծառայության որակը գնահատելու եւ կենտրոնացված քլիրինգի իրականացման նպատակներով, նշանակված օպերատորներից պահանջվում է տարին առնվազն մեկ անգամ փոստային տվյալներ տրամադրել Փոստային միության Միջազգային բյուրոյին: Միջազգային բյուրոն բոլոր անձնական փոստային տվյալներին պետք է վերաբերվի խորհրդապահորեն:

Հոդված 10

Տեխնոլոգիական չեզոքությունը

1. Սույն համաձայնագրով սահմանված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տվյալների փոխանակումը կատարվում է տեխնոլոգիական չեզոքության սկզբունքի հիման վրա, ինչը նշանակում է, որ այդ ծառայությունների մատուցումը կախված չէ հատուկ տեխնոլոգիայի օգտագործումից:

2. Փոստային վճարման հանձնարարությունների կատարման ընթացակարգերը, ինչպիսիք են հանձնարարությունների ընդունման, համակարգ մուտքագրման, ուղարկման, վճարման եւ փոխհատուցման եւ բողոքներին ընթացք տալու կարգը, ինչպես նաեւ դրամական միջոցները ստացողին հանձնելու ժամկետը, կարող են տարբերվել՝ կախված հանձնարարության կատարման համար օգտագործվող տեխնոլոգիայից:

3. Փոստային վճարման ծառայությունները կարող են մատուցվել տարբեր տեխնոլոգիաների համակցությամբ:

Գլուխ II

Ընդհանուր սկզբունքները եւ ծառայության որակը

Հոդված 11

Ընդհանուր սկզբունքները

1. Ցանցի միջոցով հասանելիությունը եւ ֆինանսական ծառայությունների շրջանակի ընդլայնումը

1.1. Փոստային վճարման ծառայությունները մատուցվում են նշանակված օպերատորների կողմից իրենց ցանցի (ցանցերի) եւ (կամ) ցանկացած այլ գործընկերային ցանցի միջոցով՝ այդ ծառայությունների՝ մարդկանց հնարավորինս մեծ շրջանակի համար հասանելիությունն ապահովելու եւ մատչելի փոստային վճարման ծառայությունների ավելի լայն շրջանակի հասանելիության եւ օգտագործման նպատակով:

1.2. Փոստային վճարման ծառայությունները պետք է հասանելի լինեն բոլոր օգտվողներին՝ անկախ նշանակված օպերատորների հետ ունեցած պայմանագրային կամ առետրային հարաբերությունների առկայությունից:

2. Դրամական միջոցների առանձնացումը

2.1. Օգտատիրոջ դրամական միջոցները պետք է առանձնացվեն: Այս միջոցները եւ դրանց հոսքերը պետք է առանձնացվեն օպերատորների այլ միջոցներից եւ հոսքերից՝ հատկապես վերջիններիս սեփական միջոցներից:

2.2. Նշանակված օպերատորների միջեւ վարձատրության հետ կապված հաշվարկներն առանձին են օգտվողների միջոցների հետ կապված հաշվարկներից:

3. Փոստային վճարման հանձնարարությունների տրման եւ վճարման արժույթը

3.1. Փոստային վճարման հանձնարարության գումարը պետք է արտահայտվի եւ վճարվի ստացման երկրի արժույթով կամ ստացման երկրի կողմից թույլատրված ցանկացած այլ արժույթով:

4. Հրաժարվելու անհնարինությունը

4.1. Փոստային վճարման հանձնարարությունների էլեկտրոնային միջոցներով ուղարկման համար գործում է հրաժարվելու անհնարինության սկզբունքն այն իմաստով, որ պատվիրող նշանակված օպերատորը չի կարող կասկածի տակ առնել այս հանձնարարությունների առկայությունը, իսկ վճարող նշանակված օպերատորը չի կարող հերքել հանձնարարությունը ստացած լինելու փաստը, եթե հաղորդագրությունը համապատասխանում է կիրառվող տեխնիկական ստանդարտներին:

4.2. Փոստային վճարման էլեկտրոնային հանձնարարություններից հրաժարվելու անհնարինությունն ապահովվում է տեխնիկական միջոցներով՝ անկախ նշանակված օպերատորի կողմից օգտագործվող համակարգից:

5. Փոստային վճարման հանձնարարությունների կատարումը

5.1. Նշանակված օպերատորների միջեւ փոստային վճարման հանձնարարություններն ուղարկվում են սույն համաձայնագրի դրույթներին եւ ազգային օրենսդրությանը համապատասխան:

5.2. Այն դեպքում, երբ նշանակված օպերատորների ցանցում երկու անդամ երկրներն էլ օգտագործում են նույն արժույթը, պատվիրող նշանակված օպերատորին ուղարկողի կողմից փոխանցված գումարը պետք է լինի նույնը, ինչ վճարող նշանակված օպերատորի կողմից ստացողին վճարված գումարը: Եթե արժույթը նույնը չէ, ապա գումարը, ըստ անհրաժեշտության, պետք է փոխարկվի պատվերի կատարման եւ (կամ) վճարման պահի դրությամբ գործող փոխարժեքով:

5.3. Ստացողին կանխիկ գումարի վճարումը չպետք է կախված լինի վճարող նշանակված օպերատորի կողմից ուղարկողից համապատասխան միջոցները

ստանալու հանգամանքից: Դա պետք է պայմանավորված լինի պատվիրող նշանակված օպերատորի կողմից վճարող նշանակված օպերատորի նկատմամբ մասնավճարների վճարման, հաշիվներով կանոնավոր փոխհաշվարկների իրականացման, փոխադարձ հաշվարկների հաշվի տրամադրման կամ կենտրոնացված քլիրինգային եւ հաշվարկային համակարգի միջոցով հաշվարկների իրականացման մասով իր պարտավորությունների կատարմամբ:

5.4. Վճարող նշանակված օպերատորի կողմից ստացողի հաշվին վճարման կատարումը պետք է պայմանավորված լինի ուղարկողի կողմից այն համապատասխան դրամական միջոցների ստացմամբ, որոնք վճարող նշանակված օպերատորին հասանելի են դառնում պատվիրող նշանակված օպերատորի կողմից: Այս միջոցները կարող են ստացվել պատվիրող նշանակված օպերատորի փոխադարձ հաշվարկների հաշվից կամ կենտրոնացված քլիրինգային եւ հաշվարկային համակարգից:

6. Դրույքաչափերի սահմանումը

6.1. Պատվիրող նշանակված օպերատորը սահմանում է փոստային վճարման ծառայությունների գինը:

6.2. Այս գինն կարող են ավելացվել ուղարկողի կողմից պահանջվող ցանկացած կամընտրական կամ լրացուցիչ ծառայության համար գանձվող վճարները:

7. Վճարումներից ազատումը

7.1. Համընդհանուր փոստային կոնվենցիայի՝ ռազմագերիների եւ քաղաքացիական ներկայված անձանց համար նախատեսված փոստային առաքանիների համար սահմանվող փոստային վճարներից ազատման վերաբերյալ դրույթները տարածվում են այս կատեգորիայի ստացողների համար փոստային վճարման ծառայության միջոցով առաքվող առաքանիների վրա:

8. Վճարող նշանակված օպերատորի վարձատրությունը

8.1. Վճարող նշանակված օպերատորը փոստային վճարման հանձնարարությունների կատարման համար վարձատրվում է պատվիրող նշանակված օպերատորի կողմից:

9. Նշանակված օպերատորների միջեւ հաշվարկների կատարման միջեւ ընկած ժամանակահատվածները

9.1. Նշանակված օպերատորների միջեւ ուղարկողի անունից ստացողին վճարված կամ նրա հաշվին մուտքագրված գումարների գծով հաշվարկների կատարման հաճախականությունը տարբերվում է նշանակված օպերատորների միջեւ վարձատրության գծով հաշվարկների կատարման հաճախականությունից: Վճարված կամ հաշվին մուտքագրված գումարների գծով հաշվարկները կատարվում են առնվազն ամիսը մեկ անգամ:

10. Օգտվողներին տեղեկացնելու պարտավորությունը

10.1. Օգտվողներն իրավունք ունեն ստանալու հետեւյալ տեղեկությունները, որոնք հրապարակվում եւ հասանելի են դարձվում բոլոր ուղարկողներին. փոստային վճարման ծառայությունների մատուցման պայմանները, գները, գանձվող վճարները, փոխարժեքները եւ համաձայնությունները, պատասխանատվության կիրառման պայմանները, ինչպես նաեւ տեղեկատվական եւ տեղեկատու ծառայությունների

հասցեները:

10.2. Այս տեղեկատվությունը տրամադրվում է անվճար:

Հոդված 12

Ծառայությունների որակը

1. Նշանակված օպերատորները կարող են որոշում կայացնել համատեղ ապրանքային նշանի միջոցով նույնականացնել փոստային վճարման ծառայությունները:

2. Փոստային գործառնությունների խորհուրդը սահմանում է էլեկտրոնային եղանակով փոխանցվող փոստային վճարման հանձնարարություններին ներկայացվող՝ սպասարկման որակի ապահովման նպատակները, տարրերը եւ չափանիշները:

3. Նշանակված օպերատորներն էլեկտրոնային եղանակով փոխանցվող փոստային վճարման հանձնարարությունների համար պետք է կիրառեն սպասարկման տարրերի եւ չափանիշների նվազագույն քանակ:

Գլուխ III

Տվյալների էլեկտրոնային փոխանակման սկզբունքները

Հոդված 13

Փոխգործելիությունը

1. Ցանցերը

1.1. Բոլոր նշանակված օպերատորների միջեւ փոստային վճարումների ծառայությունների կատարման համար անհրաժեշտ տվյալների փոխանակման եւ ծառայությունների որակի դիտանցման համար նշանակված օպերատորները պետք է օգտագործեն Միության էլեկտրոնային տվյալների փոխանակման համակարգը (EDI) կամ ցանկացած այլ համակարգ, որով ապահովվում է սույն համաձայնագրին համապատասխան փոստային վճարումների ծառայությունների փոխգործելիությունը:

Հոդված 14

Էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանակման անվտանգության ապահովումը

1. Նշանակված օպերատորները պատասխանատվություն են կրում իրենց սարքավորումների պատշաճ աշխատանքի համար:

2. Պետք է ապահովվի տվյալների էլեկտրոնային փոխանցման անվտանգությունը՝ փոխանցվող տվյալների նույնականությունը եւ ամբողջականությունն ապահովելու համար:

3. Նշանակված օպերատորները պետք է ապահովեն գործարքների անվտանգությունը՝ միջազգային ստանդարտներին համապատասխան:

Հոդված 15

Հետեւման եւ հետագծման համակարգը

Նշանակված օպերատորների կողմից կիրառվող համակարգերը պետք է հնարավորություն տան մշտադիտարկել հանձնարարությանն ընթացք տալը եւ ուղարկողի կողմից դրա հետկանչումը մինչեւ այն պահը, քանի դեռ համապատասխան գումարը չի վճարվել ստացողին կամ մուտքագրվել նրա հաշվին կամ անհրաժեշտության դեպքում՝ վերադարձվել ուղարկողին:

Մաս II

Փոստային վճարման ծառայությունները կարգավորող կանոնները

Գլուխ I

Փոստային վճարման հանձնարարություններին ընթացք տալը

Հոդված 16

Փոստային վճարման հանձնարարություններ ընդունելը, դրանց մուտքագրումը եւ փոխանցումը

1. Փոստային վճարման հանձնարարությունների ընդունման, մուտքագրման եւ փոխանցման պայմանները սահմանվում են Կանոնակարգերով:

2. Փոստային վճարման հանձնարարությունների վավերականության ժամկետը չի կարող երակարածվել եւ սահմանվում է Կանոնակարգերով:

Հոդված 17

Ինքնության ստուգումը եւ դրամական միջոցների վճարումը

1. Ստացողի ինքնությունը ներպետական օրենսդրությանը համապատասխան հաստատելուց եւ նրա կողմից տրամադրված տեղեկությունների ճշգրտությունը ստուգելուց հետո նշանակված օպերատորը կատարում է կանխիկ վճարումը: Ստացողի հաշվին կանխիկ դրամական փոխանցման կամ ստացողի հաշվին փոխանցման դեպքում վճարվող գումարը մուտքագրվում է ստացողի հաշվին:

2. Դրամական միջոցների վճարման ժամկետը սահմանվում է նշանակված օպերատորների միջեւ կնքված երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերով:

Հոդված 18

Առավելագույն գումարը

Նշանակված օպերատորները Համաշխարհային փոստային միության Միջազգային բյուրոյին հաղորդում են իրենց ներպետական օրենսդրությամբ սահմանված՝ ուղարկման կամ ստացման մասով առավելագույն գումարների չափը:

Հոդված 19 **Փոխհատուցումը**

1. Փոխհատուցման չափը

1.1. Փոստային վճարումների ծառայությունների շրջանակներում փոխհատուցումը ներառում է փոստային վճարման հանձնարարության ամբողջ գումարը՝ արտահայտված պատվիրող երկրի արժույթով: Փոխհատուցման ենթակա գումարը պետք է հավասար լինի ուղարկողի կողմից վճարված գումարին կամ նրա հաշվից հաշվեգրված գումարին: Նշանակված օպերատորի կողմից թույլ տրված սխալի դեպքում փոստային վճարման ծառայության գինն ավելացվում է փոխհատուցվող գումարին:

1.2. Վերադիր վճարով դրամական հանձնարարության դեպքում փոխհատուցում չի գործում:

Գլուխ II **Բողոքները եւ պատասխանատվությունը**

Հոդված 20 **Բողոքները**

1. Բողոքները պետք է ուսումնասիրվեն փոստային վճարման հանձնարարության ընդունման օրվանից հետո վեց ամսվա ընթացքում:

2. Նշանակված օպերատորներն իրենց ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունեն փոստային վճարման հանձնարարություններին վերաբերող բողոքների կապակցությամբ հաճախորդներից գանձելու վճարներ:

Հոդված 21 **Նշանակված օպերատորների պատասխանատվությունն օգտվողների առջեւ**

1. Դրամական միջոցների տնօրինումը

1.1. Բացառությամբ վերադիր վճարով դրամական հանձնարարությունների՝ պատվիրող նշանակված օպերատորն ուղարկողի առջեւ հաշվետու է դրամարկը հանձնված կամ ուղարկողի հաշվից ելքագրված գումարների համար մինչեւ՝

1.1.1. փոստային վճարման հանձնարարության պատշաճ կատարումը, կամ

1.1.2. ստացողի հաշվին գումարի մուտքագրումը, կամ

1.1.3. միջոցների վերադարձը ուղարկողին կանխիկ կամ որպես դրամական մուտք իր հաշվին:

1.2. Վերադիր վճարով դրամական հանձնարարությունների դեպքում պատվիրող նշանակված օպերատորը ստացողին հանձնված գումարների կամ ուղարկողի հաշվից ելքագրված գումարների համար վճարողին հաշվետու է մինչեւ վերադիր վճարով դրամական հանձնարարությունների պատշաճ վճարումը կամ

ստացողի հաշվին գումարի մուտքագրումը:

Հոդված 22

Նշանակված օպերատորների՝ միմյանց նկատմամբ ունեցած պարտավորություններն ու պատասխանատվությունը

1. Յուրաքանչյուր նշանակված օպերատոր պատասխանատու է իր կողմից թույլ տրված սխալների համար:

2. Պատասխանատվության պայմանները եւ չափը սահմանվում են Կանոնակարգերով:

Հոդված 23

Նշանակված օպերատորներին պատասխանատվությունից ազատելը

1. Նշանակված օպերատորները պատասխանատվություն չեն կրում՝

1.1. ծառայությունների մատուցումն ուշացնելու դեպքերում,

1.2. եթե նրանք անհաղթահարելի ուժի հետեւանքով առաջացած փոստային վճարման ծառայության տվյալների ոչնչացման պատճառով չեն կարող ապահովել փոստային վճարման հանձնարարության կատարումը, եթե նրանց պատասխանատվության վերաբերյալ այլ ապացույց չի ներկայացվել,

1.3. եթե վնասը հասցվել է ուղարկողի սխալի կամ անփութության պատճառով, մասնավորապես՝ փոստային վճարման հանձնարարության հետ կապված, այդ թվում՝ փոխանցված միջոցներն օրինական աղբյուրից ստացված լինելու եւ փոստային վճարման հանձնարարության օրինական նպատակ հետապնդելու փաստերի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու իր պատասխանատվության մասով,

1.4. եթե փոխանցված դրամական միջոցներն առգրավվել են,

1.5. ռազմագերիների կամ ներկալված քաղաքացիական անձանց պատկանող դրամական միջոցների դեպքում,

1.6. եթե օգտվողը բողոք չի ներկայացրել սույն համաձայնագրով սահմանված ժամկետի ընթացքում,

1.7. երբ պատվիրող երկրում փոստային վճարային ծառայությունների գործողության ժամկետը լրացել է:

Հոդված 24

Պատասխանատվության մասով վերապահումները

21-23-րդ հոդվածներով սահմանված պատասխանատվության վերաբերյալ դրույթների մասով որեւէ վերապահում չի կարող արվել՝ բացառությամբ երկկողմ համաձայնագրի առկայության:

Գլուխ III

Ֆինանսական հարաբերությունները

Հոդված 25

Հաշվապահական հաշվառման եւ ֆինանսական կանոնները

1. Հաշվապահական հաշվառման կանոնները

1.1. Նշանակված օպերատորները պետք է գործեն Կանոնակարգերով սահմանված հաշվապահական հաշվառման կանոններին համապատասխան:

2. Ամսական եւ ընդհանուր հաշիվների պատրաստումը

2.1. Վճարող նշանակված օպերատորը յուրաքանչյուր պատվիրող նշանակված օպերատորի համար պատրաստում է ամսական հաշիվ՝ դրանում նշելով փոստային վճարման հանձնարարությունների համար վճարվող գումարները: Ամսական հաշիվները պետք է միեւնույն պարբերականությամբ ներառվեն ընդհանուր հաշվանցման հաշվի մեջ, ներառյալ՝ մասնավճարները, եւ ծառայեն մնացորդի որոշմանը:

3. Մասնավճարը

3.1. Նշանակված օպերատորների միջեւ փոխանակումների ժամանակ առաջացած անհամապատասխանությունների դեպքում պատվիրող նշանակված օպերատորը վճարող նշանակված օպերատորին վճարում է մասնավճար առնվազն ամիսը մեկ անգամ, հաշվարկային ժամկետի սկզբում: Այն դեպքում, երբ փոխանակումների դիմաց վճարման հաճախականության ավելացման արդյունքում վճարման ժամկետը կրճատվելով դառնում է մեկ շաբաթից պակաս, օպերատորները կարող են համաձայնության գալ այդ մասնավճարից հրաժարվելու շուրջ:

4. Կենտրոնացված հաշիվը

4.1. Ընդհանուր առմամբ, յուրաքանչյուր նշանակված օպերատոր օգտվողների դրամական միջոցների համար պետք է ունենա առանձին կենտրոնացված հաշիվ: Այս դրամական միջոցները պետք է օգտագործվեն բացառապես ստացողներին վճարված փոստային վճարումները կարգավորելու կամ չկատարված փոստային վճարման հանձնարարությունների դիմաց ուղարկողներին փոխհատուցելու համար:

4.2. Պատվիրող նշանակված օպերատորի կողմից վճարված մասնավճարը մուտքագրվում է կենտրոնացված հաշվին՝ վճարող նշանակված օպերատորի համար: Այս մասնավճարները պետք է օգտագործվեն բացառապես ստացողներին վճարումներ կատարելու համար:

5. Երաշխիքային ավանդը

5.1. Երաշխիքային ավանդի վճարումը կարող է պահանջվել Կանոնակարգերով նախատեսված պայմաններին համապատասխան:

Հոդված 26

Վերջնահաշվարկը եւ քլիրինգը

1. Կենտրոնացված հաշվարկը

1.1. Նշանակված օպերատորների միջեւ հաշվարկները կարող են անցնել կենտրոնական քլիրինգային կենտրոնով՝ Կանոնակարգերով սահմանված ընթացակարգերին համապատասխան, եւ պետք է կատարվեն նշանակված

օպերատորների կենտրոնացված հաշիվներից:

2. Երկկողմ հաշվարկներ

2.1. Հաշիվ-ապրանքագրի ներկայացում՝ հաշվի ընդհանուր մնացորդի հիման վրա

2.1.1. Ընդհանուր առմամբ, կենտրոնական քլիրինգային համակարգի անդամ չհանդիսացող նշանակված օպերատորները հաշվարկները կատարում են ընդհանուր հաշվում առկա հաշվեմնացորդի հիման վրա:

2.2. Փոխադարձ հաշվարկային հաշիվը

2.2. Եթե նշանակված օպերատորներն ունեն փոստային-չեկային համակարգ (giro institution), նրանցից յուրաքանչյուրը կարող է բացել փոխադարձ հաշիվ, որի միջոցով կկարգավորվեն փոստային վճարումների ծառայություններից բխող նրանց փոխադարձ պարտավորությունները եւ պահանջները:

2.2.2. Եթե վճարող նշանակված օպերատորը չունի փոստային-չեկային համակարգ, փոխադարձ հաշվարկների հաշիվը բացվում է մեկ այլ ֆինանսական հաստատությունում:

2.3. Հաշվարկների կատարման արժույթը

2.3.1. Հաշվարկներն իրականացվում են ստացման երկրի արժույթով կամ նշանակված օպերատորների միջեւ համաձայնեցված երրորդ արժույթով:

Մաս III

Անցումային եւ եզրափակիչ դրույթներ

Հոդված 27

Վերապահումները Համագումարում

1. Միության խնդիրների եւ նպատակների հետ անհամատեղելի վերապահումներ չեն թույլատրվում:

2. Որպես ընդհանուր կանոն, ցանկացած անդամ երկիր, որի տեսակետներն ընդունելի չեն մյուս անդամ երկրների կողմից, պետք է հնարավորինս փորձի հաշվի նստել մեծամասնության կարծիքի հետ: Վերապահումներ պետք է արվեն բացառապես բացարձակ անհրաժեշտության դեպքում, եւ դրանք պետք է պատշաճ կերպով հիմնավորված լինեն:

3. Սույն համաձայնագրի որեւէ հոդվածի մասով ցանկացած վերապահում ներկայացվում է Համագումար որպես Համագումարի առաջարկ՝ Միջազգային բյուրոյի աշխատանքային լեզուներից որեւէ մեկով եւ Համագումարների աշխատակարգերի համապատասխան դրույթներին համապատասխան:

4. Ուժի մեջ մտնելու համար վերապահումների վերաբերյալ ցանկացած առաջարկ պետք է հաստատվի վերապահմանը վերաբերող հոդվածում փոփոխության ընդունման համար պահանջվող մեծամասնության կողմից:

5. Սկզբունքորեն վերապահումները վերապահում կատարող անդամ երկրի եւ մյուս անդամ երկրների միջեւ կիրառվում են փոխադարձության սկզբունքով:

6. Սույն համաձայնագրի մասով կատարված վերապահումները ներառվում

են դրա Եզրափակիչ արձանագրության մեջ՝ Համագումարի կողմից հաստատված առաջարկների հիման վրա:

Հոդված 28 **Եզրափակիչ դրույթներ**

1. Կոնվենցիան անհրաժեշտության դեպքում կիրառվում է անալոգիայի սկզբունքով բոլոր այն դեպքերում, որոնք ուղղակիորեն չեն կարգավորվում սույն համաձայնագրով:

2. Կանոնադրության 5-րդ հոդվածը չի տարածվում սույն համաձայնագրի վրա:

3. Սույն համաձայնագրի եւ կանոնակարգերի վերաբերյալ առաջարկությունների հաստատման պայմանները

3.1. Ուժի մեջ մտնելու համար Համագումար ներկայացված՝ սույն համաձայնագրին վերաբերող առաջարկությունները պետք է հաստատվեն սույն համաձայնագրի կողմ հանդիսացող՝ Համագումարում ներկայացված եւ քվեարկելու իրավունք ունեցող անդամ երկրների մեծամասնության կողմից: Համագումարում ներկայացված եւ քվեարկելու իրավունք ունեցող անդամ երկրների առնվազն կեսը պետք է ներկա լինի քվեարկությանը:

3.2. Ուժի մեջ մտնելու համար սույն համաձայնագրի կանոնակարգերի վերաբերյալ առաջարկությունները պետք է հաստատվեն Փոստային գործառնությունների խորհրդի՝ ներկա գտնվող եւ քվեարկող անդամների մեծամասնության կողմից, որոնք ունեն քվեարկելու իրավունք, եւ որոնք Համաձայնագրի ստորագրող կողմեր են կամ միացել են Համաձայնագրին:

3.3. Ուժի մեջ մտնելու համար երկու Համագումարների միջեւ ընկած ժամանակահատվածում ներկայացված՝ սույն համաձայնագրին առնչվող առաջարկությունները պետք է ստանան՝

3.3.1. ձայների երկու երրորդն այն դեպքում, երբ քվեարկությանը մասնակցել է Համաձայնագրի կողմ հանդիսացող եւ քվեարկելու իրավունք ունեցող անդամ երկրների առնվազն կեսը, եթե այդ առաջարկությունները ներառում են նոր դրույթների ավելացում,

3.3.2. ձայների մեծամասնությունն այն դեպքում, երբ քվեարկությանը մասնակցել է Համաձայնագրի կողմ հանդիսացող եւ քվեարկելու իրավունք ունեցող անդամ երկրների առնվազն կեսը, եթե այդ առաջարկությունները ներառում են սույն համաձայնագրի դրույթներում փոփոխություններ,

3.3.3. ձայների մեծամասնությունը, եթե դրանք ներառում են սույն համաձայնագրի դրույթների մեկնաբանություն:

3.4. Չնայած 3.3.1 կետով նախատեսված դրույթներին՝ ցանկացած անդամ երկիր, որի ներպետական օրենսդրությունը դեռեւս անհամատեղելի է առաջարկված լրացումներին, կարող է դրանց մասին ծանուցվելու օրվանից հետո 90 օրվա ընթացքում Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենին գրավոր հայտարարություն ներկայացնել այն մասին, որ չի կարող ընդունել այդ լրացումը:

Հոդված 29

Փոստային վճարումների ծառայությունների մասին համաձայնագրի ուժի մեջ մտնելը եւ գործողության ժամկետը

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ին եւ գործում է անորոշ ժամկետով:

Ի հաստատումն որի՝ անդամ երկրների կառավարությունների լիազորված ներկայացուցիչները կնքեցին սույն համաձայնագիրը մեկ բնօրինակից, որն ի պահ է հանձնվում Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենին:

Դրա մեկական օրինակ Միության Միջազգային բյուրոյի կողմից կփոխանցվի կողմերից յուրաքանչյուրին:

Կատարված է Աբիջանում 2021 թվականի օգոստոսի 26-ին:

Փոստային վճարումների ծառայությունների մասին համաձայնագրի եզրափակիչ արձանագրություն

Այսօր կնքված՝ Փոստային վճարումների ծառայությունների մասին համաձայնագրի ստորագրման պահին անդամ երկրների կառավարությունների լիազորված ներկայացուցիչները համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված I Համաձայնագրի գործողության շրջանակը

Չնայած 1-ին հոդվածին՝ Վիետնամն իր տարածքում վերադիր դրամական հանձնարարությունների ծառայություններ մատուցելու իրավունք է վերապահում:

Հոդված II Գործառնական գործառույթները

1. Վկայակոչելով 6.4-րդ հոդվածը եւ Փոստային վճարումների ծառայությունների մասին համաձայնագրի 3-րդ եւ 4-րդ հոդվածների կիրառմամբ՝ Ֆրանսիայի կողմից նշանակված ցանկացած օպերատոր փոստային վճարումների ծառայությունների մատուցման գործունեություն է իրականացնում միայն Համաձայնագրի ստորագրող կողմ հանդիսացող անդամ երկրների օպերատորների հետ:

2. Այն դեպքում, երբ վերոնշյալ օպերատորներից որեւէ մեկը նշանակված օպերատոր չէ, այն կկարողանա վճարել միայն Ֆրանսիայի նշանակված օպերատորներից ստացված հանձնարարությունների դիմաց: Ֆրանսիայի նշանակված օպերատորի հետ փոխանակման պայմանագիր կնքելու համար այս օպերատորը նախեառաջ պետք է տրամադրի համապատասխան անդամ երկրի իրավասու մարմիններին ուղարկված փոստային վճարումների ծառայության հանձնարարությունների բացառիկ կատարմանն իր մասնակցության մասին հայտարարության պատճենը՝ իր հայեցողությամբ այն համատեղելով թույլտվության հետ:

3. Այս նույն դրույթները փոխադարձաբար կկիրառվեն Ֆրանսիայի ներպետական տարածքում Ֆրանսիայի ցանկացած օպերատորի նկատմամբ, որը ցանկություն կհայտնի գործընկերային հարաբերություններ հաստատել բացառապես Փոստային վճարումների ծառայությունների մասին համաձայնագրի կողմ հանդիսացող այլ անդամ երկրների նշանակված օպերատորների հետ:

Ի հաստատումն որի՝ անդամ երկրների կառավարությունների լիազորված ներկայացուցիչները կազմեցին սույն արձանագրությունը, որն ունի նույն ուժն ու

վավերականությունը, ինչ կունենար այն դեպքում, երբ դրա դրույթները ներառված լինեին Փոստային վճարումների ծառայությունների մասին համաձայնագրի բուն տեքստում, եւ ստորագրեցին այն մեկ բնօրինակից, որն ի պահ կհանձնվի Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենին: Դրա մեկական պատճենը Միության Միջազգային բյուրոյի կողմից կփոխանցվի յուրաքանչյուր անդամ երկրի:

Կատարված է Աբիջանում 2021 թվականի օգոստոսի 26-ին:

Մույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2021թ. օգոստոսի 26-ին ստորագրված «Փոստային վճարումների ծառայությունների մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**